

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՄ ԲԸԱՀ-ԱՇԶԲ-14/0-2

ք. Արմավիր

«31» 05 2014 թ.

«ՀՀ Արմավիրի մարզպետարանը», ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՏԻԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Առուստամյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արմավիրի մարզի «Ֆերիկ համայնքի միջնակարգ դպրոցի ուժեղացում», «Նոր Արտագերս համայնքի միջնակարգ դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում», «Գետաշեն համայնքի միջնակարգ դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում» և «Գեղակերտ համայնքի միջնակարգ դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում» օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) Նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, մեքենա-սարքավորումներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) Պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

Նախատեսվում է նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների գնման դեպքում/:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 5 820 000 (հինգ միլիոն ութ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ընդ որում.

Չափաբաժին N1 - ՀՀ Արմավիրի մարզի << Ֆերիկ համայնքի միջնակարգ դպրոցի ուժեղացում >> օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ՝ 1 620 000 (մեկ միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Չափաբաժին N2 - ՀՀ Արմավիրի մարզի <<Նոր Արտագերս համայնքի միջնակարգ դպրոցի լրկալ ջեռուցման համակարգի կառուցում>> օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ՝ 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Չափաբաժին N3 - ՀՀ Արմավիրի մարզի << Գետաշեն համայնքի միջնակարգ դպրոցի լրկալ ջեռուցման համակարգի կառուցում>> օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ՝ 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Չափաբաժին N4 - ՀՀ Արմավիրի մարզի «Գեղակերտ համայնքի միջնակարգ դպրոցի լուկա ջեռուցման համակարգի կառուցում» օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ՝ 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծած ու փորձաքննություն իրականացրած անձինք պատվիրատուին վճարում են տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման և (կամ) դրա հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից

ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ.

2) Կատարողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝

«Արմավիրի մարզպետարան»
ք. Արմավիր, Արուսյան 71
հ/հ 900331131079
Արմավիրի ՏԳԲ
ՀՎՀՀ 044752763

Կ.Տ.



Կ ա տ ա Ր Ո Ղ՝

«ՏԻՍԱՐ» ՍՊԸ
ք. Երևան Թամանյան թիվ 2բն. 63
ՀՎՀՀ 01519892
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
հ/հ 2470100301660000

Ա. Առուստամյան



Չափաբաժին N1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի միջնակարգ դպրոցի ուժեղացման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների

1	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը	Գոյություն ունեցող դպրոցի մեկհարկանի /15.6x22.1/մ ² մակերեսով առաջին և /33.8x8.75/մ ² մակերեսով նմանատիպ կոնստրուկտիվ լուծմամբ 2-րդ, 3-րդ մասնաշենքի ուժեղացման և վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ «ՀՇՆ II-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր> և «ՀՇՆ I-4.02-99 <Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում: Հիմնական դրույթներ> նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
2	Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ՝ ըստ ոլորտային հատկանիշների	Դպրոցի մեկհարկանի /15.6x22.1/մ ² մակերեսով առաջին և /33.8x8.75/մ ² մակերեսով նմանատիպ կոնստրուկտիվ լուծմամբ 2-րդ, 3-րդ մասնաշենքի ուժեղացում և վերականգնում միջնակարգ կրթության համակարգի արդի պահանջների ապահովում՝ «Կառավարության 13.12.2007թ թիվ 1490-Ն որոշմամբ հաստատված նորմատիվներին համապատասխան:
3	Նախագծի տեսակը	28.08.2013թ թիվ 10-3/105 «Հայսեյսմշին և ԿՊԳՀԻ» ԲԲԸ շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտական եզրակացությունների համաձայն նախագծման ենթակա ծավալների չափագրում, աշխատանքային նախագծի կազմում՝ «Զաղշին նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում համակարգչային ծրագրով՝ կոնստրուկտիվ համակարգի համակարգչային հաշվարկի ապահովմամբ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի

		փորձաքննության ապահովում՝ ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 812, ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի թիվ 711-Ն և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 193 որոշումներին համապատասխան:
4	Նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում շինաշխատանքների կազմակերպման նախագծի մշակում լուկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, ծավալաթերթ՝ յուրաքանչյուրը 4-ական օրինակ՝ կրիչով և փաստաթղթային տարբերակներով:
5	Այլ պահանջներ	Սահմանված կարգով տեխնիկական պայմանների ստացում: Նախագծի համաձայնեցում շահագործողի և համայնքի ղեկավարի հետ: Անհրաժեշտության դեպքում նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացության ձեռքբերում: Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն: Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում :
Աշխատանքի կատարման ժամկետը		
	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

Չափաբաժին N2

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Արմավիրի մարզի Նոր Արտազերս համայնքի միջնակարգ դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների

1	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ քննությամբ	Գոյություն ունեցող դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ «ՀՇՆ II-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր> և «ՀՇՆ I-4.02-99 <Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում: Հիմնական դրույթներ> նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
2	Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ՝ ըստ ոլորտային հատկանիշների	Դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում միջնակարգ կրթության համակարգի արդի պահանջների ապահովում՝ «Կառավարության 13.12.2007թ թիվ 1490-Ն որոշմամբ հաստատված նորմատիվներին համապատասխան:
3	Նախագծի տեսակը	Նախագծման ենթակա ծավալների չափազրում, աշխատանքային նախագծի կազմում՝ «Զարդին նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում համակարգչային ծրագրով՝ կոնստրուկտիվ համակարգի համակարգչային հաշվարկի ապահովմամբ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի փորձաքննության ապահովում՝ «Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 812, «Կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի թիվ 711-Ն և «Կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 193 որոշումներին համապատասխան:

4	Նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում շինաշխատանքների կազմակերպման նախագծի մշակում լուրջ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, ծավալաթերթ՝ յուրաքանչյուրը 4-ական օրինակ՝ կրիչով և փաստաթղթային տարբերակներով:
5	Այլ պահանջներ	<p>Սահմանված կարգով տեխնիկական պայմանների ստացում: Նախագծի համաձայնեցում շահագործողի և համայնքի ղեկավարի հետ: Անհրաժեշտության դեպքում նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում ինժեներատեխնիկական հետազննության եզրակացության ձեռքբերում:</p> <p>Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն:</p> <p>Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում :</p>
Աշխատանքի կատարման ժամկետը		
	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

Չափաբաժին N3

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳԵՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի միջնակարգ դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների

1	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ քննադատություն	Գոյություն ունեցող դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ «ՀՆՆ II-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր> և «ՀՆՆ I-4.02-99 <Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում: Հիմնական դրույթներ> նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
2	Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ՝ ըստ ոլորտային հատկանիշների	Դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում միջնակարգ կրթության համակարգի արդի պահանջների ապահովում՝ «Կառավարության 13.12.2007թ թիվ 1490-Ն որոշմամբ հաստատված նորմատիվներին համապատասխան:
3	Նախագծի տեսակը	Նախագծման ենթակա ծավալների չափազորում, աշխատանքային նախագծի կազմում՝ «Քաղշին նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում համակարգչային ծրագրով՝ կոնստրուկտիվ համակարգի համակարգչային հաշվարկի ապահովմամբ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի փորձաքննության ապահովում՝ «Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 812, «Կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի թիվ 711-Ն և «Կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 193 որոշումներին համապատասխան:

4	Նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում շինաշխատանքների կազմակերպման նախագծի մշակում լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, ծավալաթերթ՝ յուրաքանչյուրը 4-ական օրինակ՝ կրիչով և փաստաթղթային տարբերակներով:
5	Այլ պահանջներ	<p>Սահմանված կարգով տեխնիկական պայմանների ստացում: Նախագծի համաձայնեցում շահագործողի և համայնքի ղեկավարի հետ: Անհրաժեշտության դեպքում նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում ինժեներներկրաբանական հետազննության եզրակացության ձեռքբերում:</p> <p>Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում << ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն:</p> <p>Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում :</p>
Աշխատանքի կատարման ժամկետը		
	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի միջնակարգ դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների


<p>1</p>	<p>Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը</p>	<p>Դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ «ՀՇՆ II-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր> և «ՀՇՆ I-4.02-99 <Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում: Հիմնական դրույթներ> նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:</p>
<p>2</p>	<p>Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ՝ ըստ ոլորտային հատկանիշների</p>	<p>Դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում միջնակարգ կրթության համակարգի արդի պահանջների ապահովում՝ «Կառավարության 13.12.2007թ թիվ 1490-Ն որոշմամբ հաստատված նորմատիվներին համապատասխան:</p>
<p>3</p>	<p>Նախագծի տեսակը</p>	<p>Նախագծման ենթակա ծավալների չափագրում, աշխատանքային նախագծի կազմում՝ «Զարդին նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում համակարգչային ծրագրով՝ կոնստրուկտիվ համակարգի համակարգչային հաշվարկի ապահովմամբ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի փորձաքննության ապահովում՝ «Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 812, «Կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի թիվ 711-Ն և «Կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 193 որոշումներին համապատասխան:</p>

4	Նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում շինաշխատանքների կազմակերպման նախագծի մշակում լուրջ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, ծավալաթերթ՝ յուրաքանչյուրը 4-ական օրինակ՝ կրիչով և փաստաթղթային տարբերակներով:
5	Այլ պահանջներ	<p>Սահմանված կարգով տեխնիկական պայմանների ստացում: Նախագծի համաձայնեցում շահագործողի և համայնքի ղեկավարի հետ: Անհրաժեշտության դեպքում նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացության ձեռքբերում:</p> <p>Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում << ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն:</p> <p>Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում:</p>
Աշխատանքի կատարման ժամկետը		
	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պատվիրատու՝

<< Արմավիրի մարզպետարան
 ք. Արմավիր, Արովյան 71
 հ/հ 900331131079
 Արմավիրի ՏԳԸ
 ՀՎՀՀ 01145276

(Ստորագրություն)
 Փ. Կարսաբեկյան
 Կ.Տ.



Կ ա տ ա ր ո ղ՝

<<ՏԻԱՐ>> ՍՊԸ
 ք. Երևան Թամանյան թիվ 2բն. 63
 ՀՎՀՀ 01519892
 <<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ
 հ/հ 2470100801660000

(Ստորագրություն)
 Ա. Առուստամյան
 Կ.Տ.
 76861910
 10 123



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*


«Հ» դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	«Հ» Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի միջնակարգ դպրոցի ուժեղացման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների						1 620 000	1 620 000	1 620 000	1 620 000	1 620 000	1 620 000	1 620 000	1 620 000
2	«Հ» Արմավիրի մարզի Նոր Արտագերս համայնքի միջնակարգ դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների						1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000
	«Հ» Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի միջնակարգ դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների						1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000
3	«Հ» Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի միջնակարգ դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների						1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են անողական կարգով:


Պատվիրատու՝

«Հ» Արմավիրի մարզպետարան
 ք. Արմավիր, Արովյան 71
 հ/հ 900331131079
 Արմավիրի ՏԳԲ
 ՀՎՀՀ 04415278

Կ. Տ. Կարապետյան


Կատարող՝

«ՏԻԱՐ» ՍՊԸ
 ք. Երևան Թամանյան թիվ 2բն. 63
 ՀՎՀՀ 01519892
 «Երևանի կապիտալ» ՓԲԸ
 հ/հ 247600501660000

Բ. Առուստամյան


Հավելված 3

« 31 » « 05 » 2014 թ.

կերպած NԱՄ ԲԸԱԿ-ԱՇՁԲ-14/0-2 ժամկետով գնման պայմանագրի

Կատարող

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____

գտնվելու վայրը _____
հհ _____

հվհհ _____

հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<< _____ >> << _____ >> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ << _____ >> << _____ >> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____, և Կատարողը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով

նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____ 20 թ-ից _____ 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
ԸՆդամները				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Ազգանուն, Անուն
Կ.Տ.